

ԲԱԺԱՆՈՐԻՍԿՐՈՒԹԻՒՆ

Պոչխարիոյ համար	12 ծր.
Տարեկան	6 "
Վեցամսեայ	6 "
Արտասահմանի	
համար տարեկան	15 "
Վեցամսեայ	8 "

Անտիկայի համար	
Տարեկան	3 սյր.
Վեցամսեայ	1.50 "

Մանուրեան տղոց անու
չին երեսին համար 40 ս
խկ վերին երեսին հա
մար 20 սակիսի կ. երե
հին անդի անգլալեռու
համար 20 0/0 զեղ կրչ
լայ

Վառնայի համար մոտ 40 սակիսի

ՇԱՐՋՈՒՄ

ՎՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՂՈՒՄԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐ ՏՄՐԱԿՈՒԹ ԶՈՐԵՔԵՍԱԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

Նախկին Եւրոպական շարժումը
համարձակութեամբ հաս
ցիկն .

Редакция на вѣстникъ
„Шаржумъ“
Варна

Redaction du journal
„Charjoum“
Varna (Bulgarie)

Արտասահմանի համար
մեկի
(20 ՍԱԿԻՍԻ)
Պոչխարիոյ համար
մեկի
(15 ՍԱԿԻՍԻ)

Գրութիւնք ևս չեն տրուիր

ՇԱՐՋՈՒՄԻ ԲԱԺԱՆՈՐԻՍԿՐՈՒԹՅԱՆ ԳՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՐԻՍԿՐՈՒԹՅԱՆ ԳԵՏՔ ԵՒ ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐԷ

ՍԱՀՈՒԱՆ ՊԱՏԻԺ

Երէկ իրիկուն՝ եւրոպական
ժամը տասնին տասնները՝ Մահ-
ուան Պատժոյ ենթարկուեցան
ներկարար Մատուր և Խաչըրսրզ
կարապետ . Առաջինը իր սան
մէջ գնդակի (3) երեք հարուա-
ծով գիտապատու ինկաւ . Իսկ երկ
րորդը (5) հինգ գնդակ կերաւ
Թապախանէ կոչուած բազմամարդ
տեղը՝ խուռն բազմութեան մը
անջեւ . Գնդակներ արձակուած
են ժողովրդին վրայ և մանա-
ւանդ ոստիկան Էօմէրի վրայ՝
յանդգնած բլաւուն համար հե-
տեւի Ահաբեկիչին .

Յուզմունք և խուզարկութիւն-
ներ .

Մանրամասնութիւններ յաջոր-
դաբար .

44 Մայիս 1903
Զմբուհայ

ՄԵՐ ՀԱՅՐԵՆԱՍԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՈՒՆ

Այսօր երրորդ անգամ է որ
հրատարակութեան կուսանք եւ-
րոպայի Հայ Ուսանողական Մի-
ութեան անդամներուն ուղղուած
վերջին շրջաբերական նամակը .
Իր այդ նամակով Միութեան
կարգադիր Յանձնաժողովը նկա-
տի կառնէ Պրիւքսէլի համագու-
մարին չկայանալը և նոր հա-
մագումար մը նշանակուելուն
պէտքը ու կը դիմէ բոլոր ըն-
կերներուն՝ անոնց կարծիքը առ
նելու համար նշանակուելիք հա-
մագումարի տեղուն ու ժամա-
նակին վրայ .

Դեռ երկու ամիս առաջ չէինք
կրնար ցաւ չզգալ՝ երբ հրատա-
րակութեան կուսայինք Միու-
թեան ուրիշ մէկ շրջաբերակա-
նը, որ կը յայտնէր թէ կարելի
չպիտի ըլլար այս տարի ապրիլ
1ի Համագումարին հաւաքումը՝
Պրիւքսէլի մէջ . Չէինք կրնար

խորունկ վիշտ մը չզգալ՝ յան-
կարծ ընդհատուած տեսնելով
մատղաշ հայ հայրենասէրներու
այս եռանդոտ Միութեան այն-
քան աղւոր գործունէութիւնը .
Բայց հիմա՞ որ նոր համագու-
մարի մը համար միջոցներ ձեռք
կառնուին, սկսուած օգտաւէտ
գործ մը շարունակելու . Նանքեր
կըլլան, մեր հայրենասէր ուսա-
նողները իրաւունք կուսան մեզ
յուսալու որ անոնք պիտի քալեն
յամագործէն՝ միանգամ ընդ միշտ
իրենց գծած փրկութեան՝ ճամ-
բէն .

Այս սիւնակներուն մէջ ուրիշ
անգամներ ալ վեր հանուած են
այն օգուտները, զորս արդէն
սկսաւ տալ ազգին իր է՛ն թարմ
ուժերէն կազմուած այս խումբը .

Թէեւ մենք այլեւս վերջնա-
կանապէս համոզուած ենք թէ
մեր ազգային Մեծ Մրցակիցը գը-
լուխ հանելու համար ամենէն ա-
ւելի կռթնելու ենք մեր սեփա-
կան ուժերուն, բայց միեւնոյն
ժամանակ իրաւունք չունինք ու
չենք կրնար շտեմնել սա բաց
արձակ ճշմարտութիւնը թէ այդ
վնէ գործին վրայ իր ահագին
ազգեցութիւնը պիտի ունենայ
նաեւ ուրիշ ուժ մը — ոչ — գիւա-
նազէտ եւրոպայի հասարակաց
կարծիքը .

Եւ այդ ուժը վստահաբար պի-
տի հակի մեր կողմը, եթէ ազ-
գերը լուսաւորուին Հայութեան
անցեալ փառքին և ներկայ տու-
նապանքին վրայ .

Բրօքսէլանդ գրչով և խօսքով,
ահաւասիկ այն լոյսը, որ պիտի
ցոյց տայ հայկական խնդիրը,
որ պիտի ներկայացնէ մեզ՝ մեր
իսկութեան մէջ եւրոպայի ժո-
ղովուրդներուն, որ պիտի լսեց
նէ մեր արդար բողոքը անոնց .

Եւ անկարելի է գտնել ուրիշ
աւելի նպատակայարմար, աւելի
կարող կազմակերպութիւն մը՝
քան եւրոպայի Հայ Ուսանողա-
կան Միութիւնը՝ մեր Մեծ գոր-
ծին աս ուղղութիւնով ծառայե-
լու կոչուած .

Իր նախածնունդութիւնով անց-

եալ տարիէն ի վեր՝ եւրոպայի
զանազան անկիւններուն մէջ
կազմակերպուած հայանպատ
հասարակները ապացոյցներն են
այս ըսուածներուն .

Ամենուս համար ալ պարզ է
թէ ժընէվ, Պէրլին, Փարիզ,
Միլան, Հռոմ և ուրիշ կողմեր
տեղի ունեցածներուն նման մի-
թիւններով և քօնֆերանտներով
հայ ուսանողութիւնը մեծ ծա-
ռայութիւններ պիտի մատուցա-
նէ իր ազգին .

Այս մէկ երկու խօսքը ըսելէն
ետքը՝ հոս առիթէն օգուտ կը
քաղենք անգամ մըն ալ խրկելու
համար եւրոպայի շորս կողմը
ցրուած հայ ուսանողներուն՝ ի-
րենց հասցէին ուղղուած սա՛ կը-
րակոտ տողերը, փոխ առնելով
զանոնք Միութեան Լիւպօր Կօ-
միտէին մէկ շրջաբերականէն,
«Այնպէս ընկերներ՝ Այդ
աշխատանքը, սկզբում կաթիլ
կաթիլ և բսժան, կը
լայնանայ, կա՛ծի և կը կազմի
հոսանքներ՝ ուժգին, կենդանա-
նարար . Հայկական ուսանողու-
թիւնը, կազմուած աւելի քան
400 հոգուց, հեռու երկրից՝ ան-
զոր է կազմել «մարտախումբ»,
բայց կարող է կազմել «բողոքա-
խումբ», որ պիտի հնչեցնէ եւ-
րոպայի ականջին հայրենիքի
ողբը . Ժողովրդի կակիծը, կրու-
ուողներու յոյսն ու յոյժը . Ի՞նչ
խառնե՛ք .»

Այո՛, աշխատեցէ՛ք .
Որու որ շատ տրուեցաւ՝ անկէ
շատ պիտի պահանջուի .

Հայրենիքի դժբախտ հողին
վրայ կուտելու տաժանագին ու
գիւղաղնական դերը կը ծանրա-
նայ հայ յեղափոխական կազմա-
կերպութեան ուսերուն վրայ .
Դուք ալ արտասահմանի բրօքս-
էլանդային հեշտալի դերը առէ՛ք
ձեր ուսերուն վրայ .

Եւ հայ բողոքը թո՛յ որոտայ
Ասիոյ մէջ՝ զենքով, եւրոպայի
մէջ խօսքով .

Եւ հայ ազգը թող վստահ ըլ-
լայ որ՝ շուտով պիտի լուսնայ ու-
ղատութեան ու երանութեան

ցանկալի առաւօտը՝ իր կենա-
րար ճամբաններուն մէջը հալեցը
նելով բռնութեան խաւարը և
ստրկութեան տառապանքը .

Վհա

ՕՐՈՒԱՆ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մանաւանդ սա վերջին տասնակ
տարիներու մէջ, երբ աչքի առնե-
րենք այնպիսի վրայ տեղի ունե-
ցած անցքերը, ու անգամ մալ մեր
ազգային կեանքի վրայ ակնարկ մը
նետենք, այն դժբաղդ եղբակացու-
թեան պիտի յանդիմար թէ տակաւին
չենք յօտեցած, ազատ Հայրենիք ու
ինքնուրոյն կեանք ունենալու ար-
ժանաւորութեան .

Կրեալն ապ սամբեցաւ, ազատա-
սէր կրետացին, զրկեց փրկարար
զէնքը ու թշնամիին դէմ սլացաւ,
զէնքը չկրցան կասեցնել ոչ թշնամի-
ին անպատմելի վայրագութիւնները,
ոչ եւրոպական ներք գիւնադիտա-
կան սպանալիքներն և ոչ նոյն իսկ
վայրկեան մը լքուած չազդեց իրեն,
յուրական փոքրիկ թագաւորութեան
յաղթութեամբ կտ քաշուիլը, սորով
կրեալն առանձին իր մէջ միտայնակ կը
մնար թրքական գազանութիւններու
դէմ կուրծք սուռը . Մակայն փոխա-
նակ յուսահատելու աւելի և աւելի
լեցնեցան վրէժխնդրութեան սուրբ
և արդար վայրոյթով ու ազատասի-
րական անյազ տեղիներով : Իրեն վեր-
ջին ու միակ նշանաբան ընտրեց
«Ազատութիւն կամ մահ» , ու իր
յոյսերը պսակուեցան .

Փոքրիկ թրանսվալը ոգի ի բռն
2-3 տարիներ անընդհատուի մղեց,
իրմէ հազարաւոր անգամներ զօրաւոր
Անգլիաի դէմ, վերջ ի վերջոյ թէեւ
պարտասած, բայց պատուաւոր դա-
շինքով մը զէնքը վար դրաւ .

Այսօր ալ մակեդոնիան է որ դի-
ցազնաբար կուլ և կը մղէ իրեն ինչ-
պէս նաեւ մեր — հայրենեաց քան-
գիւղին դէմ և ինչպէս դիւրեւն է
կետեցնել, չպիտի ուշանայ ազատու-
թեան ոսկիծածանջ վաղորդայնը, քա-
նի որ մակեդոնացի անձուէր հայրե-
նասէրները, առանց կարեւորութիւն
ընծայելու աղէն ու ծախելու փշած հօ-
վերուն, պիւղացի ու քաղաքացի ա-
մենքը միահամուռ իրենց կեանքի
զնով առաջ կը վարեն յեղափոխական

Ս. Գործը:

Մեր Ազգ. կեանքն ալ - թէև յուսալից է, վասն զի ըստ երեւոյթին մեր անձնուէր երթոսարդութիւնն ալ - խօսքս բուն յեղափոխականներուն է - անգործ նստած չէ, սակայն կ'աջիւրդէ անանց զգուանք զգալու գիտել, կարգ մը մշտնջենական քարոզիչներու ընթացքը, որոնք իրենց նոյն իսկ հասարակ շուկայի իրենց քարոզածին վրայ, անոնք աւելորդ յոգնութիւններ յանձն կառնեն նոր աշխարհներէն հին աշխարհը, ու փոխադարձաբար, ուղեւորութիւններ ընել, ժողովուրդին տուած այն դրամները, որոնք պէտք են զէնքի յատկացուիլ, իրենց աննպատակ թափառումներով կը փճացնեն և իրաւունք կուտան մեզի որ ըսենք իրենց. ով մեծ (.) քարոզիչ փրօփականտիտներ, մենք քարոզչներու պէտք չունինք, մանաւանդ երբ կեղծ ազգասիրական բարբառանքներուն իսպառնում ըլլան նաև տէրջը խօսքերը:

Ազգին գիտակից մասը շատ լաւ կը ճանչնայ իր հարազատ գաւկեններ թողէք որ ոյժ առնան, մի խոտորեցնէք զինքը վասնզի այդ արարքը ոճարգործութիւն է, հիմայ խօսքի ատեն չէ, գործ պէտք է:

Եթէ երբէք ուխտած էք անպատճառ վեպերու մէջ երեցած, արտար ու ոճիրներով յափրացած և զէմքերու դերը կատարել, ես իորհուրդ կուտայի ձեզ տարբեր անուն շահագործել, ըստ իմ կարծեաց ձեզի համար աւելի լաւ և նպատակայարար կը լինէր շահատակութեան ասպարէզ ընտրել կլօնքը, որուն մէջ աւելի պարարտ սրսեր կրնաք միշտ ձեռք ձգել:

Թիւ 512 «Շարժում»-ի մէջ երեցող երկու պատանիներու օրինակելի ու որսաշարժ ձեռնարկը, պարտք կը դնէ մեր վրայ, հրապարակաւ շնորհակալ եմ:

ՅԵՂԱՓՈՒՍՈՒԹԻՒՆԸ

Ն Ա Ր Փ Ո Ւ Ս Կ Ե Ր Ը

Երոպացիք աւելի շատ որք կը պահեն քան հայ հարուստները. ինչու վերջինները փառաբանելու ոչ եւրոպացի մեծ բարիքար մը, երբ երկուքն ալ հայ ժողովրդի նոյն ծառայութիւնը եւ մարդասիրութիւնը կը ընեն. սոքա խարոթիւն մը եւ հակամարդկային և այն հարուստը, օրինակի համար, կը տարբերի անով որ հայ է, բայց մենք կուզէինք անոր նիւթական ուժին մէջ նշմարել ժողովրդի մը մեծ իտէպիւն պաշտպանը. միանգամայն Եւրոպացիներէն շատեր օգնելով հայ թշուառներուն հայկական դատին հզօր պաշտպաններ եղած են միանգամայն. բայց հայ հարուստը, ոչ: Երբ մենք տիեզերական մարդասիրութեան կողմ կը կրենք, դեռ անգուտ եւ յաճախ անպիտան անձնաւորութիւններու առջեւ կուզենք նախապաշար պատկառում մը ունենալ անոր համար որ նաև կը վերջաւորին: Տեսնուեցաւ. տեղիացի հարուստ մը՝ որ շայտատանը զինե-

հատրել այդ երկու մատող հայրենասէրներու վեհ ձեռնարկը. ազգին այդ դեռարդը չի կոչուակները: Այո՛, ազնիւ պարուններ, մեր անպատմելի տառապանքներու և խոր վիշտերուն մէջ ձեր և ձեզ նմաններու գոյութիւնն է որ քիչ շատ կը յուսադրէ ըզմեզ:

Այսօր էութեամբ տկար թէև, սակայն հոգեով վեհ ու ազնիւ կը ներկայանանք և այն ազգը որ ձեզ նման զգայուն պատանիներ կը ծնի, անբռնաբարելի իրաւունք ունի ապրիւն և պիտի ապրի և ո՞վ դիտէ ձեր մէջէն ապագայ ո՞րպիսի գաղափարական հերոսներ պիտի ունենայ տառապանք հայութիւնը, մինչև ցարդ նահատակուած հերոսներու անկումները իրենց սուրտ շիրիմներու խորքէն կ'օրհնեն ձեր ազնիւ ձգտումները:

Ձեր օր նպատակ «Ջէյթուն» ձեռնարկին մէջ որչափ որ, վարանոտ ու տարակուսական շնչո մը կ'ընդշարունակէ, ընդհակառակը երևան կուգայ ձեր հոգեւոր վեհութիւնը իր բոլոր վեհութիւնովը: ու միայնգամայն ծանր կ'ընտրանք մը այն դասակարգին, որին անհամեմ պարտականութիւնն է՝ որչափ կ'ընել է շուտ՝ ազգող միջոցներու դիմել՝ ընդօրոյթ օգնութեան, ձեռք կառկարելու համար հպարտ ու աննուած «Ջէյթուն» սիրելի հայրենու: Կը յուսանք թէ ձեր ձեռնարկը խթան մը պիտի ըլլայ իւրաքանչիւր հայու, չընդանդալի իր պարտականութեանց վեհագործներէն մէկին մէջ, որուն մի քիչ յապաղումը գոյցէ անդարմանելիօրէն ազգասիր ըլլայ: Վասնզի փոքրիկ «Ջէյթուն»-ն օրական 50 մահը գաղտնիքի դժբաղդուրի մէջ:

Այիսի-Որդեգիրը

ԵՐԿՐԱՇԱՐԺ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՊՈԼՍՈՅ ՄԷՋ

Մալոգիերոսի մէջ պատահած երկրաշարժին մասին նոր մանրամասնութիւններ կը հասնին, քաղաքին հեռադրական կայարանէն տեղեկագրուած է աղետին ծանրութիւնը և աւերին մեծութիւնը: Քաղաքին գրեթէ բոլոր բնակարանները տակնուվրայ եղած են, թրքական երկու մզկիթ, հայկական երկու եկեղեցի, կառավարական պաշտօնատունը, զօրանոցը, հեռագրատունը, շուկան և այլն բոլորովին հորձանած են: Վաղեմի պարիսպներու ամրակուռ մասերը և հաստատուն շէնքեր տակնուվրայ մէջ տակնուվրայ եղեր են: 24 ժամ բոլոր ազրիւրներու ջուրերն այնքան պղտորներ են, որ անկարելի է զերէ խմելու ջուր գտնել, բունցն ցնցոմներէ քիչ քանակութեամբ են նաև շատ մը գրեզներ: Վերջիններուն մէջ եղած կորուստը զեռ յայտնի չէ ցնցումները տեղի ունեցեր են զիչեր ատեն, երբ ժողովուրդը քունի մէջ էր:

Շատեր խօսական փրօզումներու մէջ միայն կրցեր են արթննալ, բայց չկարենալով ազատուիլ զօրիւնի արկածին գոհ զացեր են անկարագրելի ձգնաժամով. աղիոզորմ հոգեվարքով, Առաջին թիկն ցնցումներէն ընդոստ արթնողներ կրցեր են մաքապուր ազատիլ, բայց չեն կրցած օգնել իրենց պարագային: հսկառակ անոնց ազգիսարը առաջակներուն: Գտնուած են ծնողներ, հերոսաբար կուտեր են բնութեան դէմ անոր ձանկերէն աննկու համար իրենց հոգեհատարները, կառավարութեան կարգադրութիւնովը սկսեր են պեղումներ կատարուիլ: Սոսկալի գարշահատութիւն մը կը տիրէ եզեր հիմա աւերակներուն մէջ, մարդոց և անասուններու բազմաթիւ դիակները սկսեր են հոտիլ:

Պաւլանքի մէջ եղած կորուստներ:

բուն վրայ հետեւեալը կը հաղորդուի: 150 տուն քերա եւ 50 տուն հայ ունեցող կաթար գիւղը վտանգուած է և վնասուած են 6-700 կողի: Չոհեր տուած են նոյնպէս թրքաք. նակ թախար-Քալէ. հայաբնակ Քէքերը, Մլնիտու, բուր, փիւրան, Շիխաղուպի գիւղերը և Չէրքէզնը: Յնցումները զգալի եղած են շատ ընդարձակ տարածութեան մը վրայ ալճավազ Բաղէ, Վարդօ, խնուս միւջև Վան:

Մալոգիերոսի մէջ մեռած են 168 հայ: Անցեալ սպրիլի 19ին Վանայ մէջ ալ տեղի ունեցած են զօրաւոր ցնցումներ: բայց բարեբաղդաբար ստացուած է հետեւեալը: Յոյսող օրերուն մէջ տակնուվրայ սկսեր են շրջակայքէն ցաւալի լուրեր հասնիլ: Վանայ ծովակին հիւսիսարևմտի լեռներէն կ'ընդհարուածը՝ Սիսկան որ 430,000 տնտեսաբար բարձր է՝ ծովի մակերեսէն թէն և որ արդէն հրաբխային լեռ մը կը համարուի, ուժգին ցնցումով տակնուվրայ ըլլեր է իր ստորոտին վրայ գտնուող 10է աւելի գիւղերը: Վանի մը գիւղ հողին մէջ մտած և աներեւութացած են խալառ, Նորչէնճըղ ըստ գիւղէ մը մէջ մարդ միայն կրցեր է ազատիլ:

Ամսոյս 13ին ալ պոլսոյ մէջ զգացուեր են սոց տեսակ ցնցումներ: Առաջին ցնցումը եղած է թիկն, բայց երկրորդը բաւական զօրաւոր ըլլալով տեւեր է 6-7 վայրկեան և պահ մը իրորանցում տիրեր է ժողովուրդին մէջ, երկրաշարժը զգացուեր է նոյնպէս կղզիներու, Վրսիփորի, Նիկոմիդիոյ և Ատա-Բազարի մէջ՝ սոսկ ցնցումներու օր հետեւեալը:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՇՐԷՆԵՐԸ

Ռուսաստանէն Ամերիկա գաղթող հրէաներուն համար Զիրօկոյէ 6000 երկաթուղիի տուճակ խըրկուէր է: Միւս կողմէն չքաւոր հրէացիներու բացուած հանգստա-

լու խորտու եւ մարդասէր գաղափարը յղացաւ, ըսէք ո՞ր հայ հարուստը այդ գիւցազնական մտածումը ունեցաւ և մտադրեց լրագործել:

Բայց պիտի ըսեն անձերի փաստաբանները՝ թէ ժամհարեան մը որբեր պահելով եւ ուրիշ բարեգործութիւններ ընելով, իսկ Մանթաշօֆ մը ժամեր շինելով կամ քանի մը ուսանողներ պահելով, երոպական համալսարաններուն մէջ, ազգային գոյութեան պահպանումին կը ծառային: Հոս է, կարծենք, մեծ թիւերի մտադրութիւնը եւ արաքսուական ըմբռնումը, ժամհարեան հատարակ բարեգործ մըն է, իսկ Մանթաշօֆ փիւլիսը մը գուցէ:

Եթէ որբեր պահելով ազգի մը գոյութիւնը ու ապագան կը կարծես ապահովել՝ ժամհարեանի ողբերգութեան պահանջները, անգիտակցօրէն սոփիստութեան մէջ ստիպուած են մտորիլ: Հայութեան ապագան ոչ որբերուն կերցնել խմցնելուն մէջ է, ոչ ժամ շինելուն մէջ ոչ այլորդ, Հայաստանի ազատութեան եւ հայ ժողովրդի հաւաքական իտէպիւն մէջն է, որուն հասնելու համար պատմութիւնը յատուկ ճամբաներ գծած է: Ժամհարեան կամ Մանթաշօֆ կուզեն որ աշխարհի վրայ հայեր գտնուին, թէ հայ ազգի բարոյական

ամբողջութիւն մը, որ տիեզերքի ճարակին վրայ իր ուրոյն տեղը ունենայ, եթէ մեր իտէպը այն պիտի ըլլայ որ ազգերու միջզէին մէջ ցիրուցան կամ բրածոյ հայեր զրտնուին թեր նմոյն, ես հայ եմ բնորով կամ թէ հայուստի մը շինած ժամքնալ ծուկն մը աղօթք ընել ու խաչ երդումն է միայն մեր գոյութեան պատճառը, յու է որ այժմէն հրաժարինք ու եւ է գոյութիւն պահպանելու համար ճիգերէն ու պայքարներէն:

Ծարդ մեր հարուստներուն գործունեութեան կերպը հոգ կը մզէ, այսինքն ազգային այլանդակութեան:

Եթէ ժամհարեան որբեր պահելով ազգային բարձրագոյն նպատակի մը ծառայած ըլլալու համոզումը ու փառասիրութիւնը ունէր, ինքնիրեն կը հակասէր՝ երբ այդ նպատակին ծառայող մարմնոյն կը դաւաճանէր եւ կը մերժէր օգնել ազատագրութեան գաղտնի: Ուրեմն ժամհարեանը կ'օգնէր որբերուն որ շինուին քաղցածութեանէ եւ ոչ թէ ազգային յոյսեր կը պատրաստէր, ինչպէս ըսէին թիւրքա իր պաշտպանները: Եթէ ժամհարեանը հեռուոր իտէպ մը ունէր աչքի առջեւ, ուրեմն ազ-

գին ապագայ հայրենասէր գործիչներ եւ յեղափոխականներ կը մտադրէր հասցնել, հետեւեալպէս լոնդոնայն Հայաստանի փրկութիւնը բոլորովին հեռու չէր իր մտածումներէն: Իսկ մենք անոր վարժանքին մէջ չենք նկատուր այդքան միութարական շրջանայեաց կէտեր, որոհետեւ մեր ազգի գերագոյն ճղատումներ, երբ ազգովին մեր ուշադրութիւնը կեդրոնացուցած մեր գոյութեան խարխիւր ստեղծելու ծրագրներու միջոցներու վրայ կը խորհինք՝ ուրիշներ երկու որբ պահելով ազգասիրի համար իտէպը ետեւէ են, երեւակայեցէք 100 որբի համար, որոնք ով գիտէ ինչ թոյլ գաստախակութիւն կաւնեն և ո՞վ գիտէ ապագային ինչ ծաղիկներ պիտի ըլլան, բոլորովին անկազմ ու անպատրաստ ազգային գաղտնի գաղափարին, թոյլ առ իրեն մատնել օրիտասարդներ, որոնք ազգային պատկանու հոգեբանական լուզէին, պատրաստուած յոյսերն եւ ուժերը կը ներկայացնէին. դիտակ հայրենիքի տառապանքին ու պահանջին, որոնք երկուքը դուրսէն ստիպար որբեր, իսկ և անգիտակից ժամհարեան կը մէկ կողմէն որբեր կը մեծցնէր, միւս կողմէն հասած ու

կուսակցութիւնը առաջ կը տարուի : Մինչեւ հիմա 20000 տղարի գումար մը գոյացեր է այդ հան- քանակութեան, իսկ անհատա- կան նուէրները 140,000 տղարը կանցնին : Վաշինկթընի առա- ղեցաւոր Մ. Քասինի տեսակցու- թիւն մը ունեցեր է արտաքին գործոց նախարար Հր. Հէյնի հետ՝ առաջիկայ չքաւոր հրէաներուն գունդագունդ մտերիկայ զաղ- թիւն մասին : Ռուսոյ արտա- զին գործոց նախարարութեան խնդրանքով՝ առաջեկանը առա- նընդին օր ես պիտի յետաձգէ իր մէկնումը Ամերիկայէն, որով- հետեւ իր ներկայութիւնը ան- հրաժեշտ է այս միջոցին :

ԺՈՒԺՆԱԼՈՒԹԻՒՆ ԳԵՐՄԱՆՆԻՅ ՄԷՋ

Բրուսելոյ կառավարութիւնը հրամանագիր մը խրկած է նա- հանգային իշխանութեանց, որով կը հրաւիրէ ըզրոյ պաշտօնեա- ները՝ որ կարելի եղածը ընեն ալքօրի գործածութեան դէմ : Կրճաւորական Քլիպներ պիտի հաստատուին, ուր պիտի պտնուին առատ ու լաւ ուտելիք և ժողո- վրդական գիրքեր, գիւրութիւն- ներ պիտի գրուին ոչ-ալքօրական ըմպելիներուն սպառումը աւել- ցնելու համար : Կոր աղբիւրներ պիտի շինուին, առատ ու թարմ պտուղներ և զովարար ըմպելի- ներ պիտի հայթայթուին՝ եր- կաթուղիի կայարաններուն և հանրային հրապարակներու մէջ : Պետութիւնը ուժ պիտի տայ

ժողովարարութեան ընկերութիւն- ներու շանքերուն, ուսուցիչները պիտի բացատրեն իրենց աշա- կերտներուն գիտութեան շա- րիքները և ժողովրդային տես- րակներ պիտի հրատարակուին այդ մտքով :

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Հաճընէն «Մանգումէի Էֆ- քեարթ թերթին գրուած թըղ- թու կցութեան մը կը տեղեկա- նանք թէ կաթողիկոսական օ- ծումի և միաբնակչութեան համար Սիւ գայած է նաեւ 100 առնէ աւելի Ձէյթունցի րազմութիւն մը : Երեւելիներէն կան եղեր Սուրէնեան, Մէրկէրեան, Սաթ- ճեան, և Կիւլիանէսեան : Նոյն- պէս Ձէյթունի պատկառելի ա- ռաջնորդ՝ ծերունի Տ. Կարապետ Եպիսկոպոսը և Ֆրնուզի վանա- հայր Եպիսկոպոսը 5.6 քահանա- ներով : Այս սովիւ Հաճընցի- ները փառաւոր ընդունելութիւն մը ըրեր ևն Ձէյթունցիներուն՝ պէտք եղած ըզրոյ պատիւները շնայելով անոնց :

—Օրմանեան պատրիարքին զլուխը նոր փորձանք մըն տլ և- կեր է՝ բայց այս անգամ ալ կը- ցեր է իր օձիքը ազատել : Են- լիաբարութիւններ մի ընէ՛ք : Կառքի արկած մըն է պարզօպէս՝ Գործակատար Ֆէսճեանի հետ Ենի Գիւղէն Կերտ վերադարձած ատեն՝ Կիւմիւզ Սուրիէն վեր ճամ- բուն դարձուած տեղը՝ վերէն սրարչաւ եկող բեռնաբարձ կտաք մը զարնուելով պատրիարքի կտ

քին՝ գլխորդ է զայն : Պատրի- արք և գործակատար՝ երկու է- Ֆէնտիները կըցեր են ողջամբ ազատիլ : Կառապանը և բարա- պանը թեթեւ ճմլամներ ստացեր են : Վերաւորուեր են ձիերը և կտորուած են կառքին ապակի- ներն ու Օրմանեանին «ասան» :

—Կիւլիկիոյ Տ. Սահակ Կաթո- ղիկոսը մայիս 2ին, ուղեկցու- թեամբ Եպիսկոպոսի մը, վար- ղապետի մը, Սեպի ազաներու, և շորս ձիււոր զինուորներու՝ Կը- լանի ազարակը գացեր է, որ Սի- սէն երեքուկէս ժամ հետի կը գտնուի եզեր : Ապարակին շորս կողմը գառնալը երկու ժամ տե- ւած է և բոլոր մտակայ գիւղա- ցիները ձկեր են տեսնուլ հա- մար նորընտիր կաթողիկոսը :

—Պոլսոյ քաղաքական ժողովը նկատի առնելով Մալազկերտի երկրաշարժէ արկածեալներուն անմիջական օգնութեան կարօտ բլլալը որոշեր է հեռագրով խր- կել 100 ոսկի և հետզհետէ նոր նպաստներ հասցնել երբ հան- քանակութիւնը սկսի :

—Կեսարացի հանգուցեալ Կիւմշ- եան Յովհաննէս էֆէնտիին առ- մարները հարեւանցի կերպով քննուելով տեսնուեր է որ 25000 ոսկիի մօտ հարստութիւն մը թո- յած է, որուն 10000 ոսկին կը պատկանի ազգին՝ հանգուցեալին օրինական և վաւերական կա- կազրին համաձայն :

—Փարիզէն մեզ գրուած մաս- նաւոր նամակէ մը կը տեղեկա- նանք թէ «Բանասէր» խմբա- գիր Պ. Կ. Բասմաթեան Յունիսին վերջեր պիտի մեկնի դէպի Ա- նի՝ ազգային հնութիւնները ու-

սումնասիրելու համար : Նոյն նամակէն կիւմիւնք նաեւ թէ Ֆրանսական կառավարութիւ- նը շնորհած է վերջերս Պ. Բաս- մաթեանին «Փիլիսոփայութեամբ» ի տիպոսն զ«Փայմ-Արատեմի- ք» պատուած շանը :

—Սմսոյ 15ին Պոլսոյ Ս Փրկ- շեան Հիւանդանոցին 71-րդ առ- րեկարծին առթիւ հանդիսաւոր արարողութիւններ կատարուեր են հիւանդանոցի մատուին մէջ և յետոյ 200է աւելի հրաւիր- եալներ ճօն սեղանի մը շուրջը ըսլորուելով ըմբոշիւներ են հա- մեզ խորովածներ բազմաանակ աղանդներով, գիւնիներով, գարեջուրներով ևն ևն :

Ականջը խօսի Հայաստանի քաղցած ու թշուառ զեղջուկնե- րուն :

—Վառնայի Պատ. Թաղական խորհուրդը իր յայտարարու- թեան համաձայն քանի մը օրէ ի վեր ձեռնարկած է Ձէյթունի հանգանակութեան քաղաքիս մէջ :

ԵՐԻՈՊՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

(Շրջաբերական նախակ) Ընկերներ Բրիւսէլի Համագումարը չը կայա- ցաւ : Հարկաւոր է նշանակել նոր Համագումար, սակայն մենք մեզ ձե- ունհաս չենք համարում առանց Մի- ութեան տեղական մարմինների խոր- հրդակցութեան, որոշել նրա տեղն ու ժամանակը : Բարեհաճեցէք ժողով գումարել եւ

գործին նուիրուած իտէալական տը- զաքներ կը ընջէր միջտեղէն : Ազգը քէտք չունէր այդ գէնուչանի էջին, և ե պէտք չէր որ ազգասիրութեան խնդրագոյնը սպառնար աղքատ մարդիկին ազգի մը կենսական գաղտնիք սրտաբար գործիչներուն : Եթէ անոր միտքերուն մէջ ունէ է՝ և ուսուր կամ մօտաւոր աւելի բարձր նպատակ մը չկար. —ինչ որ տա- րակուելի չէ—պէտք է լուսթիւնով աննիւնք այդպիսիներու կենսաբի- վրային, որոնք մեր ժողովրդի տը- րացեական հակամեները մշակելէ զատ ուրիշ ոչինչ ըրած են :

Պ. Մանթաշեան միլիտան կը ծախ- սէ Բարիզի մէջ ժամ մը շինելու հա- մար : Աստուածավախ փառասիրու- թիւն մը, որ այնպիսի լոյս-փայտ- լի մէջ կը սիրէ անմահանալ կրօ- նական յիշատակարանով մը : Լաւ, բայց ազգը պարտաւոր չէ այդ տեսակ մասնաւոր եւ անպէտ քամահանքնե- րու հրախուսող ջրալ. ազգի մը զգացումը շատ աման ծախել ըսել է : Նախ որ փարիզի հայերը էն խորթ ու օտարտի հոյ գաղթականներէն մէկը անարժան է այդպիսի մեծ զո- հողութեան մը : Ֆրանսացի մը կը- սէր, «Ինչ տեսակ հայեր են փարիզի հայ գաղթականութիւնը, ոչ մէկը կը հետաքրքրուի հայ ազգին դատով :

Իր օրինակներ այնքան իրար անցած են, Բարեբախտաբար երբէք չենք պարծնեցած այդ որձեւէց գաղթակա- նութիւնով, որ յաճախ ամօթով կար մըրցուցած է հայ ազգին երեսը :

Եւ ինչ կը նշանակեն եկեղեցա- շէն ցաւագոր լնանիները ու բարե- պատական անմահութիւնները, կը- րօնական կտակները, որոնց մէջ ոչ մէկ հոգի, երեւի ու թրթռում կայ կարծես հայ ազգը ստեղծուած բլլար միլիոնայ ազգի և քահանաներ պա- հել իր զաւակները թաղելու համար : Եւ որքան կը սիրեն մեր Աստուած խորոզ հարուստները ժամերու ճակ- տին վրայ փայլիլ դատական ու ա- տանդական սա տեսակ արձանագրու- թիւններով, ոչինեցու տաճարս ու- ռօտաձեռնութեամբ հաճի Մանթա- յօֆին ու առաքինազ. ուղ կողակցին» Ե. Ե. . .

Եթէ այդ հարուստները կը կար- ձեն որ ժամ շինելով ազգին փրկա- րար ծառայութիւններ կրնեն, պա- լաւտիւններ կը պատրաստեն «Հայաս- տան աշխարհին» մեր քթին կը խն- դան : Օտար երկրի մէջ—եթէ բնորո- շինք միջոցի իսկ որ՝ կրօնը մեր գոյութեան պահպաններէն մէկը ե- զած ըլլայ այս ցիրուցան վիճակին մէջ—եկեղեցիներ շինելը փաստակար ան միջոց ստեղծան մը այն տեսա-

կէտով որ կը նպաստեն յաճախ հա- յիրու օտարութեան մէջ հաստատու- ելուին եւ բլլալով սակաւաթիւ ազ- գութիւն մը, որքան անօգտակար եւ աննպատակաւոր մար է գաղթա- յին ցիրուցանութիւնը մանաւանդ երբ այդ գաղութները իրենց հայրե- նիքին համար օտարներ կը դառնան : Փաղթականութիւնները օտակար են այն ատեն միայն՝ երբ օգտա ու անկար ազգութեան մը աւելորդներն են, որոնք ուրիշ երկրներու մէջ կիրթան իրենց հայր հայրենիքի բա- րոյական ու նիւթական տոկոսը կա- լեցնեն կամ ոտակիրներ կըլլան երբեմն քաղաքական առաւելութիւն- ներու ու նկատուիներու : Մանթաշ- եան եւ ուրիշներ կտոր կտոր կընեն ազգային մեծ շէնքը և մահացու հարուած կուտան անոր իտէալական յաղթանակին իրենց աննպատակ եւ ապուշ փառասէր ձեռնարկներով :

Ենթադրեցէք որ բոլոր հայերը այնպիսի քանազան եւ հեռու կէտերու վրայ գաղթականութիւններ կազմեն, և տարրեր արեւապտուութիւններու տակ, մենք այնքա ազգային միու- թիւն մը չենք ներկայացնել : Ե- րեւակայեցէք որ Մանթաշօֆ մը կամ ուրիշ մը միլիոններ ծախ- սեն եւ ժամեր շինեն այդ գաղթա- կանութիւններու մէջ եւ վերջապէս

նուիրական վէճերու վրայ անպատ անմահութիւններ չհազարծեն, ինչ օգտու կը քաղէ ատկէ հայրենիք մը որ պարտապ է եւ այդ ազգութիւնը իր պատմական ամբողջութիւնը, ի- րաւունքը եւ կոչումը կորսնցուցած է : Յիմարութիւն է ոտարէի պէս կառչել հինու մին ու կարկամ աւան- զութիւններու, երբ այդ ազգը ունէ ապագայի յոյս չունի. և չի կըր- նար միջոցի ի կ ունենալ ինքնու- թոյն գրականութիւն մը, այլ կեղծ- օտար՝ որ չպիտի բռնեայ իր բնիկ միջավայրի ոչ ջրին, ոչ հողին համը հացը : Գրականութիւն մը ազգային կոչուելու համար պէտք է որ արտա- յայտութիւնը ըլլայ այն երկրին ուր այդ ազգի պատմական ու աշխար- հազրական դեր մը ունեցած է, ներ- կայ քաղաքակրթութեան պայմաննե- րուն մէջ, անտեսական արիւնքը- տին ք պայքարին ու աշխարհիկ դա- դախարհիւնուն առջեւ, այդտեսակ անպէտ եւ թոյլ ցրուածութիւնները կը հային ու սեղի կուտան և չեն կրնար երկար ինքնուրոյնութիւնին պահել : Եթէ այդ պիտի ըլլայ մեր ազ գային ճակատադիրը, ազգասիրաբոր ժամեր շինելու պէտք չկայ :

(Շարունակելի) Հանդիսաս'ս

ընթաց կարելի է շուտ ուղարկել մեզ ձեր կարծիքը, թէ՛

1) Որ քաղաքն էք յարմար դաստիարակման համար, եւ

2) Որ ամիսը (ամառը, աշնան թէ ապրիլին՝ ինչպէս միշտ):

Տեղի վերաբերմամբ չպիտի մոռնանք քաղաքական տրամադրութիւնները՝ Բրիտանացի ոստիկանութեան վարձուքը դրան ապացոյց, Ամենայնայնոք, մեր կարծիքով, Շվեյցարիան կամ Ֆրանսիան է. քանի որ Գերմանիան, ինչպէս երեւում է, չափ էլ չափ աչքով չէ նայելու. մեր համարման, իսկ միւս երկիրները, ինչպէս Անգլիան, Իտալիան եւ Աւստրիան, հեռաւորութեան տեսակէտից՝ յարմար չեն, եւ բացի դրանից հայ ուսանողներ այնտեղ շատ քիչ կան:

Պատասխանեցէք, խնդրով եւ քննադատութեամբ մայիսի վերջը:

Ընկերական բարեկեցութիւնով

Կարգադիր Յակոբ Աճառյան

10 Մայիս 1903

ԺԸՆԷԻ

ՓՈՔՐ ԹՂԹԱՏԱՐ

16 մայիս Փ. Պօլիս

Այսօր իսկ իմացայ որ քաղաքիս Մասնախումբին որոշումով տեղւոյս քահանան հանգանակութեան ձեռնարկած է ի նպաստ Զէյթունի. Երեք ժամուան արգիւնքը եղած է մօտ 350 ֆր. կը յուսանք որ քաղաքս պիտի կրնայ տալ 6.700 ֆր. գումար մը Զէյթունի աննման կտրիճներուն:

Ականատես-Վկայ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՊՈՒԿԱՐԻՍ

Պոլսէն Տի Զայթ թերթին տրուած հեռագիր մը կըսէ թէ Պ. Նաչչէվիշ, որ նշանաւոր պետական անձնաւորութիւն մըն է, Սօֆիայէն պոլիս գացերէ թէ ե ոչ պաշտօնական հանդամանքով բայց իշխանէն և պուլկար կառավարութեան հետ համաձայնութեան մը գալու համար: Սուլթանը գոհ եղեր պուլկարութիւնը յարաբերութիւններու բարեփոխումէն և տրամագիր է եղեր շրջումներ ընել պուլկարներուն և այդ մըտքով հրահանգներ տուած է արգէն Բ. Գրան:

— Պուլկարի քարափին շինութիւնը աւարտած ըլլալով ամսոյս 18ին իշխանը մի՞ թէ բազմութեան մը ներկայութեամբ կատարեր է բացում, հանգիստար կերպով:

— Պուլկարի այլ և այլ քաղաքներուն մէջ միջիններ կը սարքուին բողոքելու համար մակեդոնի մէջ սիրող հալածանքներու դէմ, և գիմելու համար

պուլկար կառավարութեան որ հարկ եղածը ընէ վերջ կը տալու համար այդ գծուարին կացութեան:

— Սօֆիայի մէջ նախկին պուլկար նախարարները դատելու համար կազմուած պետական դատարանին ընդդիմախօսութիւնները վերջացեր են ամսոյս 17ին և դատաւորները քաղաքին խորհրդակցելու համար: Վճիռը պիտի կատարուի յունիսի սկիզբները:

— Պոլսոյ թուրքերէն Սէրվէթ թերթը կըսէ թէ պ. Նաչչէվիշ պուլկարական գործակատար նշանակուած է հոն: պուլկար թերթերը չեն հաստատեր այս լուրը:

ՄԱԿԵՒՈՒՄ

Թան յրազրի ըսածին նայելով Սէլանիքի ամբողջ ժողովուրդը մտաւայտ կը համարի պատերազմ մը Պուլկարիոյ և Թուրքիոյ մէջ: Ինուրբերը համոզուած են թէ այդ պատերազմով և Պուլկարիոյ պարտութիւն մը կրելովն է միայն որ կարելի պիտի ըլլայ վերջ մը դրնել ապստամբական շարժումներուն:

— Այս միջոցիս Մակեդոնիա և Ալպանիա գտնուող թուրք զօրքերուն թիւը բարձրացեր է 200.000ի, զորս թուրք կառավարութիւնը ստիպուած է ապրիլի 15. վճարել: զօրքերուն մեծ մասը պահեստէն զէնքի կանչուածներէ կը բաղկանայ, որոնք իրենց ընտանիքի գրկէն խլուած և հոն բերուած են: Անկարելի կը համարուի երկար ժամանակ հոն պահել զիրենք, բայց միւս կողմէն ալ անկարելի է ցրուել զանոնք, որովհետեւ այդ պարագային կրկին պիտի շատնան ապստամբներու խումբերը: Հետեւաբար պատերազմ մը անխուսափելի կը դառնայ, կըսէ Թան, այս և ուրիշ շատ մը տեսակներով:

— Ամսոյս 10ին 20 ալպանացի պետեր Սելանիկ տարուած են զոյգ գոյգիրարու կապուած՝ 50 ոստիկաններու հսկողութեան տակ պատրաստ սպասող շոգենաւով մը անմիջապէս զրկուեցր են պոլիս:

— Կըսուի թէ թուրք կառավարութիւնը որոշած է փոքր ասիա քաղաքները զոյգ այն պուլկարները, որոնք թէ և ունէ ամբաստանութեան մը տակ չեն զանուիր բայց կառկածելի են կառավարութեան առջեւ:

— Մանասթրի Սըրբոտիզ գիւղին մէջ տեղի ունեցեր է մեծ կռիւ մը: Մմտոյլ կիւղը այրած է և 200 հոգի մեռած են բացի յեղափոխականներէ: Բոլոր ժո-

ղովուրդ մասնակցած է կռիւին: Աւստրիոյ և Ռուսիոյ զեպանները քննութիւն բացեր են տեղւոյն վրայ:

— Սէլանիկի կուսակալը իմանալով որ ապստամբ մակեդոնացիներու պետ Պօլիս Սարաֆով սելանիկ կը գտնուի, յայտարարեր է թէ 1500 ոսկի պարգեւ պիտի տայ ապստամբացեալ ողջ կամ մեռած իրեն յանձնողին:

ՅՐԱՆՍԱ

Ամսոյս 11ին տեղի ունեցեր է Ֆրանսայի և սպանիոյ ինքնաշարժ կառքերու Գիւլպիտուն կողմէ կազմուած մեծ կառարչաւը: Հարիւրաւոր օդոմոպիլներ մասնակցեր են արշաւին: Բայց ծանր արկածներ պատահեր են ճամբուն: Բազմաթիւ մարդիկ վերաւորուեր են և շատեր ալ մեռած են: Ետտ մը օդոմոպիլներ ջախջախուած են և ոմանք ալ բռնկելով: Մէջիները հրոյ ճարակ եղած են:

Կառարչաւը պիտի շարունակուէր Բարիլէն մինչեւ Մատրիս, բայց Ֆրանսայի ներքին գործոց նախարարը տեսնելով անոր սարսփելի հետեւանքը՝ հրամանագիր մը հանելով արգիլեր է շարունակութիւնը ֆրանսական սահմանագիլիւն առկին:

ՌՈՒՍԻԱ

Մանյուրի մէջ իրենց զինւորական ծառայութեան պայմանաւոր լրացնող զօրքերը ետ կանչելով տրուեր են զինուորական իշխանութեանց տրամադրութեան տակ, որպէսզի գործածուին իբրեւ երկաթուղիի պահպան զօրք: Անոնցմէ զատ Ռուսիա հիմայ Մանյուրի մէջ ունի սիպերիական երկրորդ զօրքաբանակին սպայակոյտը, քսան վաշտ հրացանակիր, և մէկ պահեստի վաշտ, երկու կիսաբաժին թնդանօթաձիգ, երեք խազախ զօրագունդ և մէկ խազախ թնդանօթաձիգ: Ասոնց վրայ պէտք է աւելցնել նաեւ պահպան թնդանօթաձիգ գունդերը խոշոր թնդանօթներով, որոնք հոն փոխադրուած են հարկ եղած ատեն կարեւոր դիւրեբր գրաւելու համար:

ՆԱԿԱՏՈՒՓ

ՊԹՈՒՇԱՆ. — Պ. Մկրտիչ Կարպետեան. — «Շոգեկառքի ոճիրին հրատարակիչն է Պ. Օնիկ Բարսեղեան, Արեւելեան տրպարան, Վառնա: Ետտ մի խմբագրութիւնը ս'է ցեր չունի այս գործին մէջ: Կրնաք ուղղակի հրատարակիչին դիմել:

— Փ. ՊՈԼԻՍ. — (Պ. Ականատես — վկայ) Չեր յօդուածը ստացանք կը հրատարակուի իր կարգին:

ԳԵՂՈՒՆԻ

Անուան իսկապէս համաստասիանող պատկերազարդ մեծագիր թերթը լոյս տեսաւ: Կը բաղկանայ փաստահեղ փայլուն թղթի վրայ տպուած 10 միծաղիր քառածալ թերթի երէ, քաղցրիկ, ինը գոյնով կողքի մը մէջ կազմուած: Բազմաթիւ ազգային կեանքէ առնուած նորանոր պատկերներէ քատ, Գեղունի նարգարուած է նաեւ եօթը հատ բազմագունի պատկերներով, որոնց մէջ յատուկ ուշ կը գրաւէ Աւարայրի դիւցազներու խումբանըկարն: Մեծք ներկայ ազգովս չենք ուզեր և ոչ իսկ կարող ենք այս նոր Գեղունիի նկարագիրը և մատնախօսական ընել թէ գրական և թէ գեղարեստական տեսակետով: Այդ թողով ուրիշներու, միայն այս կիրսնք, որ ինչպէս պատկերներու, նոյնպէս և յօդուածներու յատուկ ընտրութիւն եղած է: Այս Գեղունիին ամենայն կերպով կը գերազանցէ ցարդ լոյս տեսանները, և յիշատի կրնայ կանգնել իբր գրական և գեղարեստական թանկագին կոթող մը հայ գրականութեան մէջ:

Գեղունիի կ'ԱՐԹԷ ՄԻԱՅՆ 10 ՅԲ.

ԿԱՄ 4 ԲՈՒՐԼԻ

Գեղունիին ամեն կողմ տարածելու համար, վիճակահանութեան կը քընենք մեր տպարանէն լոյս տեսած չարք մը արժէքաւոր գրքեր: Տարօրինակ մէկ անգամէն զնոյնները այդ լիճակահանութեան մէկ թիւ կ'անենան, քսան օրինակ գնողները երկու և ալն:

Գեղունիին կը զրկուի յատուկ դիւնով սպահովագրեալ, բազմաթիւ օրինակները կը զրկուին արկղերով: Որոնք որ մեզ հ'տ յատուկ հայելու չունին, պէտք են դրամը կանխիկ զրկել: Գեղունիին ստանալու համար պէտք է գրիմել հետեւեալ հասցէին:

Իմրոտիկոնի Արեւելիկ

Ս. Լազար

Վեհեթիկ (Իսալիս):

ԱԶԳ

Մեր բոլոր այն բաժանորդները, որոնք դեռ չեն վճարած իրենց բաժնեկիները, թող հաճին անյապարակ հասցնել զանոնք, կը յիշեցնենք իրենց թէ մեր բոլոր ծախքերը կանխիկ ըլլալով չենք կրնար թերթը ապառիկ ծախել:

Խմբագր.

ԵՐԵՎԱՆԻ ԱՐԵՒԵԼԻԿ

Գրեց անգլիացի Ուիլիլմ Ուօթսընի բանաստեղծը և հայերէնի թարգմանիչը Խոսրով: Կը ծախուի յետոս սանթիմի գիմել թարգմանչին:

Մ. ՍՐՄԷՆ ԱՐՏՕՆԶ

43 Տուկլու Բօ 5

Մեքսոթ (Անգլիացի)

Եւ կամ Ռուսիոյ Գաւառագրութեան վարչաւ

Отговорникъ

Мурадъ-Франосиъ

Печатня „Возможность“ Варна